ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝** Երանուհի Աղաջանյան, գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.** Վրաստանի Հանրապետություն, ք. Թբիլիսի, 17/10/2023թ. մինչև 20/10/2023թ.

3. **Հրավիրող կողմը.** Ասիական զարգացման բանկ

4. **Գործուղման նպատակը** (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Գործուղման նպատակը Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպվող Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրների պետական էլեկտրոնային գնումների զարգացման ուղիների 9-րդ համաժողովի մասնակցությունն էր: Համաժողովի նպատակը պետական էլեկտրոնային գնումների պլանավորման, մրցութային ընթացակարգերի, գնահատման, բանակցությունների և պայմանագրերի կառավարման ոլորտում թվային վերափոխումների, գնումների թափանցիկության վերաբերյալ գիտելիքների փոխանակման, հնարավոր համագործակցության, ինչպես նաև միջազգային փորձի ձեռքբերման ընձեռումն էր: Համաժողովի ընթացքում հնարավորություն տրվեց ծանոթանալ էլեկտրոնային գնումների թվայնացման ուղիների և մեխանիզմների հետ, որոնք կարող են կիրառելի լինել նաև մեր էլեկտրոնային գնումների համակարգերի արդիականացման խնդիրների լուծման համար:

5. **Քննարկված թեմաները՝**
արհեստական բանականություն և գնումների արդյունավետության բարձրացում,
պետական էլեկտրոնային գնումների կայուն զարգացման նպատակներ,
գնումներով զբաղվող մասնագետների անձնակազմի արհեստավարժության բարձրացում,
էլեկտրոնային գնումների հարթակների և դրանցում ընթացող գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացում,
միջազգային կազմակերպությունների դերն էլեկտրոնային գնումների բարեփոխումներին աջակցելու գործում,
շարունակական գիտելիքների փոխանակում և համագործակցություն Ասիա-խաղաղօվկիանոսյան պետական էլեկտրոնային գնումների ցանցի շրջանակում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Համաժողովի բացման նիստին ողջույնի խոսքով հանդես եկավ Վրաստանի տնտեսագիտական քաղաքականության կոմիտեի նախագահը, բացման խոսքով հանդես

եկան՝ ԱՀԲ-ի գլխավոր տնօրենի տեղակալը, ինչպես նաև Կորեայի Հանրապետության պետական գնումների ծառայության փոխնախագահը, արհեստական բանականության և գնումների արդյունավետության բարձրացման թեմայով հանդես եկավ Հնդկաստանի առևտրի նախարարության էլեկտրոնային շուկայի գործակալության գլխավոր գործադիր տնօրենը, տվյալների վերլուծության գծով՝ Համաշխարհային բանկի գլխավոր փորձագետը, էլեկտրոնային գնումներում թվային գործընթացների հանրային վստահության թեմայով հանդես եկավ Ղազախստանի փորձագետը, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի, Համաշխարհային բանկի փորձագետները, Մոնղոլիայի գնումների գործակալության տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի փորձագետը, թվային գործիքների, դրանց կիրառման, հասանելիության, օգտվողների աջակցության կազմակերպման թեմայով հանդես եկավ Միջամերիկյան զարգացման բանկի ներկայացուցիչը, կայուն հանրային գնումներ թեմայով ելույթով հանդես եկավ Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության փոխնախարարը, Ֆիլիպինների գնումների քաղաքականության խորհրդի գործադիր տնօրենը: Ելույթներով հանդես եկան նաև միջազգային զարգացման տարբեր բանկերի փորձառու մասնագետներն ու խորհրդատուները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Որպես պայմանավորվածություն ԱՀԲ-ի ներկայացուցիչը նշեց, որ միջազգային փորձի փոխանակման նկատառումներով Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրների միջև համագործակցությունները՝ ԱՀԲ-ի գործունեության շրջանակներում, կշարունակվեն ամենամյա կոնֆերանսների, հանդիպումների և այլ ձևաչափերի միջոցով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաժողովի ընթացքում ներկայացված նյութերը, քննարկված թեմաներն ու առաջարկությունները վերաբերում էին էլեկտրոնային գնումների համակարգերում առկա գործընթացների, դրանց կիրառումների և նոր գործիքների ներդրման հիմնախնդիրներին: Որպես առաջարկություններ հնչեցին դիտարկումներ մասնակից-պատվիրատու հեռահաղորդակցման բարելավումների, արհեստական բանականության, ռոբոտների ներդրման միջոցով տվյալների մշակման, հաշվետվողականության ապահովման, գնումների գործընթացում մասնակցության աճի և գնումների գործընթացների թափանցիկության ապահովման, թղթաբանության կրճատման, ինչպես նաև գնումների գործընթացում ներգրավված կողմերի (մասնակից, պատվիրատու) ուսուցման կամ վերապատրաստման շարունակական դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը: 25.10.2023թ.